հսկայական ջրանցքը, որ անց են կացրել այդ հովտի միջով: Բայց այն օրից, որ տիրեց թուրքը, ամէն աշխատութիւն, ամէն կենդանութիւն մեռաւ:

— Իսկ այդ շէն գիւղորայքը հայաբնա՞կ են:

— Հայաբնակ են, բայց իւրաքանչիւրի մէջ կը գտնէք մի քանի տուն քուրդ բնակիչներ: Այդ մի քանի տունը ամբողջ գիւղի ցեցը պէտք է համարել:

Նա դարձեալ լռեց:

Ճանապարհը հարթ էր. բնութիւնը եւ մարդու ոտն էր հարթել: Անգղ գետի յորդութիւնից տեղ-տեղ գոյացել էին ճահիճներ, որոնց միջից դեղին, փայլուն ջրածաղիկը զաւիկի նման փողփողում էր արեւի ճառագայթներից: Տեղ-տեղ գոյացել էին շամբուտներ: Կրիայները, որ դուրս էին եկել ցամաքը՝ արեւի տաքութիւնը վայելելու, մեր ձիաների ոտնաձայնը լսելով, խմբովին ներս էին սահում եւ թաքչում էին եղէգների մէջ: Ձիւնի նման սպիտակ արագիլը իր երկար, կարմիր կտցով եւ նոյնպէս երկար, կարմիր ոտներով հանդարտ շրջում էր ճահճի մէջ եւ իր սիրած որսն էր որոնում: Մենք համարեայ թէ նրա մօտովն անցանք: Ծանրաբարոյ թռչունը ամենեւին չվրդովուեցաւ, ուշիմ կերպով նայեց մեզ վրայ եւ կրկին շարունակեց իր որսորդութիւնը: Ուրուրը վերեւում շրջաններ էր գործում օդի մէջ լայն թեւերը բաց արած, որոնց երբեմն թեթեւ կերպով շարժում էր, կարծես թիավարելիս լինէր օդը: Ահա նա նետի նման սլացաւ դէպի ցած, մի քանի վայրկեան անհետացաւ եղէգների մէջ եւ կրկին վեր բարձրացաւ, մագիլների մէջ բռնած ունենալով մի ինչ-որ բան: Նա տարաւ իր աւարը: Արեգակը աւելի եւ աւելի այրում էր: Եթէ ծովի կողմից փչող մեղմ քամին չլինէր, տօթը կարող էր խեղդել: Ամէն ինչ անշարժ էր, ամէն ինչ լուռ էր: Միայն լսելի էր լինում անհանգիստ արտոյտի ճռնչող երգը: Միջօրէի տապի ժամանակ, երբ բոլոր թռչունները թուլացած, շնչասպառ, մի զով տեղ են որոնում հանգստանալու, նա այդ պահուն աւելի ոգեւորուում է, տաքանում է, սկսում է երգել: Բայց որտե՞ղ էր թաքնուած այդ հողագոյն թռչունը: Որտեղ էլ որ լինէր, մենք նրան չէինք կարող նշմարել: Հնձած արտերի մոխրագոյն ծղօտները, տօթի ազդեցութիւնից ցամաքած եւ դալկացած մացառների տերեւները՝ ամենեւին չեն որոշւում նրա փետուրների գոյնից: Խելացի թռչունը ընտրում է այսպիսի տեղեր: Նրա գոյնը միախառնւում է իր թաքստի տեղի գունաւորութեան հետ, եւ նա անտեսանելի է դառնում թշնամու աչքից: Գոնէ դրա խելքն ունենային այստեղի հայերը...

Մենք անցանք մարգադաշտերից, անցանք ճահիճներից, անցանք հնձած արտօրայքից: Այժմ մեր ճանապարհի աջ եւ ձախ կողմերում բարձրանում էին ժայռոտ բլուրներ: Կանաչ բուսականութեան մի նշոյլ անգամ չէր